

### ԵՄԲՈՒԻՆ ԿԱՆՁԸ

Երբ սենեակիս առանձնութեան մէջ լըռին՝  
Թըղթին, գըրին մըտերմանամ սրտագին  
Ու սաւառնի միտքն արծուի մը նըման  
Անցեալին մէջ մարդկային մեծ պատմութեան.

Կամ ձերբազատ՝ հողի խայթէն թունաւոր  
Ու ձանձրոյթի ճիրաններէն արնածոր,  
Երբ կ'արբեմ երանութեան մէջ անհուն,  
Գեղարուեստի խորհուրդներուն իմաստուն.

Վայրի տենչեր հոգւոյս վագֆը կը դարձնեն  
Դէպ' իտէալ իր սանձարձակ արշաւէն,  
Ու բռնօրէն կը բերեն զայն ներկայի  
Ամենօրեայ պայքարին մէջ կատաղի :

Ինձ կը թըլի , թէ փողոցին մէջ մարդիկ  
Կը մարտընչին ժամանակէն հետ սաստիկ,  
Եւ ամէն պահ յաղթանակէ յաղթանակ  
Ապագային կը բարձրանայ մէկ բանակ . . . ,

Մինչ ես հեռու այդ պայքարէն սրբազան  
Կը պահուրտիմ խոհերու մէջ դաւանան . . .  
Արդ խղիւսեալ՝ դուրս կը վագեմ մոլեգին՝  
Ամբոյս ուժերս նըլիքելու ամբոյսին . . . :

Մ. ՄԱՆՈՒՇԵԱՆ

